

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

---

Ռուսաստանի ելումուտքը 1866—1890 թ., Ռուսաստանի պետական պարտքը, երկաթուղիները, գվաւոր արդինաբերութիւնները, արտածութիւնը և ներածութիւնը, Պետական ելքու մուտքի նախահաջիւը առ. 1893 թ., Փոխատու-խնալողական ընկերութիւնների 25 տարւակ գործունէութիւնը Ռուսաստանում, Հրէական գաղթական ընկերութիւնը, Ապահարզանի խնդիրը, Ժողովրդական գրականութեան խնդիրը, Նորու գրքերը

Անդեալները պետական կոնտրոլի հաշւապահութեան բաժնի ձեռքով լուս ընծակեց մի հրատարակութիւն, ուր ի մի են գումարւած 1866 թւականից միսած մինչև 1891 թ. քսան ու հինգ տարւակ սովորական գումարները պետական ելքու մուտքի Ազդ գրկովկաղիսակի մէջ—առաջ չեն բերւած արտակարգ ծախքերը և դոցա թւում վերջին ոռա-տաճկական պատերազմի նսուածքը, որ է 1.107.481.518 ռուբլի:

Մենք կը գննենք ակտեղ մի փոքրիկ աղիսակ, որից ընթերցողը կը տեսնի թէ ինչպէս աստիճանաբար և գուգընթացաբար աւելացնէ են թէ մուտքի և թէ ելքի գումարները:

Մուտք	Ելք	+	-
1866 թ.	356.426.166 ռ.	413.298.102 ռ.	— 56.871.846 ռ.
1869 »	457.496.342 »	468.797.909 »	— 11.301.567 »
1870 »	480.558.832 »	481.763.948 »	— 1.205.106 »
1871 »	508.187.576 »	499.734.633 »	8.452.943 —
1873 »	537.942.323 »	539.140.337 »	— 1.198.014 »
1874 »	560.819.380 »	543.317.034 »	17.502.346 —
1875 »	577.617.243 »	543.221.521 »	34.395.722 —
1876 »	560.985.254 »	574.166.018 »	— 13.120.764 »
1877 »	550.818.580 »	586.549.603 »	— 35.731.023 »
1878 »	625.972.735 »	601.291.521 »	24.681.214 —
1879 »	662.973.822 »	643.892.258 »	19.081.564 —
1883 »	710.645.962 »	723.673.259 »	— 13.027.297 »
1885 »	765.410.380 »	806.614.346 »	— 41.203.966 »
1888 »	900.829.333 »	840.419.494 »	60.409.839 —
1889 »	944.390.769 »	857.681.126 »	86.499.641 —
1890 »	950.819.240 »	877.779.550 »	73.039.690 —

Ելքի գումարները տարեց տարի ամելացել են պետական ծախքերի անընդհատ խոչորանալուց, նւ իրաւ, ամեն տարի աւելացել է պետական պարտքերի վճարելիք տոկոսը՝ թէ զինուորական մինիստրութեան նորանոր ծախքերի շնորհիւ և թէ ազ ծախքերի աւելացումից վերաբերեալ բոլոր միա ճիշդերին, լուսաբանենք թւերով միմիան երեք հետեւեալ տարիները՝

1867 թ. 1881 թ. 1890 թ.

միլ. ռ. միլ. ռ. միլ. ռ.

Պետական պարտքերի տոկոսը	եղել	է	83	195 $\frac{1}{2}$	263 $\frac{1}{2}$
Զինուորական մինիստրութ. ծախսերը	.	127	230	228	
Նաւադնացավին	"	"	18	30 $\frac{1}{2}$	40 $\frac{1}{2}$
Ֆինանսների	"	"	79	108	109
Պետական կալածների	"	"	17	20	24
Ներքին գործերի	"	"	37	69 $\frac{1}{2}$	76
Ժողովրդական լուսաւորութեան	.	.	8 $\frac{1}{2}$	18 $\frac{1}{2}$	22 $\frac{1}{2}$
Ճանապարհների հաղորդակցութեան	.	.	24 $\frac{1}{2}$	12	56
Արդարադատութեան մինիստ. ծախք.	9	18	23		

Անընդհատ ամելացող ելքի ալս գումարների հետ հաւասարակշիռ պահպանելու համար պետութիւնը ստիպւած է եղել շարունակ մուտքի կամ նոր աղբյուրներ գտնել կամ եղածները խոչորացնել Ազդ պարզ երեսում է այն հանգամանքից, որ եկամուտի գումարը եղել է 1867 թ. 398 միլ. ռ. իսկ 1890 թ. 832 միլ. ռուբլի:

Եթէ վերցնելու լինենք ալդ գումարների կազմող թւերը կը տեսնենք որ դոքա արտպէս են ներկալանում 1867 թւականի և 1890 թ. համար

Խմիչեղէնից եկամուտ եղել	է	134	միլ. ռ.,	268	միլ. ռ.	
Մաքսի	"	"	37	" "	142	" "
Շաքարի ակցիզը	"		1 $\frac{1}{2}$	" "	21 $\frac{1}{2}$	" "
Թամբաքուի	"	"	7	" "	28	" "
Փոստի եկամուտը	"		7 $\frac{1}{2}$	" "	20	" "
Հեռագրական	"	"	2 $\frac{1}{2}$	" "	10 $\frac{1}{2}$	" "
Մնացեալ եկամուտները	"	208	" "	342	" "	

Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու ասենք միան որ ամեն մի տուրք, ամեն մի մաքս, աւելացրել է տարիների ընթացքում աւել կամ պակաս շատիներւ, Գրեթէ միշտ տէրութիւնը հասել է իւր նպատակին— այն է—վետագալ տարիներում ստացել է աւելի եկամուտ, բայց անկամած է և այն որ մի քանի տուրքերը, օրինակի համար մաքսերը, վեասել են տար ապրանքների ներմուծման, Ուկու հաշւով ներմուծւած է եղել

1867 թւին մօտ 200 միլ. ռուբլու ապրանք,

իսկ 1890 ն ն 220 ն ռուբլու, ասել է թէ միմիան 10%.

մի ամելացում,—և ալսհանդամանքը ամսշուշտ պէտք է վերագրել խոչըրացրած մաքսերին։ Ներմուծւում է ալսպիսով միմիակն անխուսափելի անհրաժեշտը։

Եթէ վերցնելու լինենք թէփ ներմուծման օրինակը, մի ապրանքի որ անհրաժեշտ մի կարիք է Ռուսաստանի համար, մննք կը տեսնենք որ մաքսերի խոչըրացումից պակասել է նաև ալդ անհրաժեշտ ապրանքի ներմուծումը. թէ է ներմուծւած՝

		Որի արժեքն է	Մաքս է վերցրած
1887 թ.	2.062.937 փութ	46.307.481 թղթ. ռ.	20.093.051 ռ.
1888 "	1.992.672 "	34.127.183 "	22.717.711 "
1889 "	1.919.564 "	32.098.633 "	22.328.665 "
1890 "	1.838.000 "	30.786.000 "	23.327.498 "

Եւ որովհետև վերջին սիհեակի ռուբլները ոսկու<sup>1)</sup> հաշտով են, ասել է թէ՝ ոչ միայն խոչըրացրած մաքսերը պակսացրել են ներմուծւող թէփի քանակութիւնը, ալ թէ վերցւող մաքսը նաև գերազանցում է թէփի արժեքից։

Գալով պետական պարտքերի կրած փոխիխութիւններին—դնենք նմանապէս մի համեմատական աղիւսակ։

Առ 1 չունար 1870 թ. դոքա էին՝

Տոկոսաւոր պարտքեր . . . . . 1.248.704.396 ռ. թղթ.

Անտոկոս " (թղթադր. փող) 567.972.166 " "

Փոխառութիւն. նախկին Լեհաստանի 37.799.231 " "

Գումար . 1.854.475.793 ռ. թղթ.

Առ 1 չունար 1891 թւականը դոքա դառել էին,

1) պարտքեր համապետական կարիքների համար 3.543.768.870 ռ.

2) " երկաթուղավին օրլիգացիաներով. . 1.516.645.900 ռ.

3) " նախկին կալւածատէրերին գիւղացի-

ների ազատավճարների համար . . . . . 461.376.450 ռ.

5.521.791.220 ռ.

Կարենոր է ուշադրութիւն դարձնել նաև ան հանդամանքի վրա, որ չը նալած ռուսաց պետական պարտքերի անընդհատ աւելանալուն—դոցա տոկոսը և պարքաշէջը վճարելու համար հարկաւոր են եղել պակաս գումարներ։

<sup>1)</sup> Աչքի առաջ ունենալով ան մեծ նշանակութիւնը, որ ունի Ռուսաստանի համար ոսկու կուրսը, դնենք ախտնեղ ռուբլ ռոկու արժեքը ըստ թղթադրամ ռուբլու վերջին մի քանի տարիներում եղածը. 1866—131<sup>1/2</sup>, կոտ., 1868—118 կ., 1869—126 կ., 1870—129 կ., 1871—75 թ.—120—116 կ., 1877—148 կ., 1878—157 կ., 1883—162 կ., 1886—164 կ., 1887—179 կ., 1886—170 կ., 1889—152 կ., 1890—140 կ..

Վարել է	մետաղի ռուբլով	թղթադր. ռուբլով
1889 թ.	73.117.093	147.865.272
1890 "	70.156.859	147.002.168
1891 "	65.034.580	150.669.207
1892 "	64.424.123	142.390.837

Մինչդեռ 1889 թւականից չորս տարի դէս—մետաղ. փոխառութեան պարուքը խոշորացել է 135.489.650 ռուբլով, իսկ թղթադրամ պարուքը 21.449.397 ռուբլով—վճարած տոկոսների գումարները պակասել են և անմիմիան չնորդիւ ֆինանսական մինիստր Վ. Հ. Հանեգրադսկու կոնվերտիալի դիմումում, որով նա խոր նախորդների կողմից արած փոխառութիւնների թանգ առ հարիւրը իջնեցրեց 4°/6-ից 3°/6 և ալճ.

Օգտաելով աստրակ վերջանալուցը անենք մի համառօտ տեսութիւն Ռուսաստանի—հիմնամլով պետութեան կողմից մատակարարած վիճակագրած ստուգ թւերի վրա:

Ռուսաստանի երկաթուղարքն զծերի երկարութիւնը հաւասար էր 27.238 վերստի, որոնցից արքոնապատկան էին 8.007, իսկ մետաղեալ 19.231 վերստը պատկանում էին մասնաւոր ընկերութիւններին, Ընդհանուր թւով մուտք է եղել 284.407.704 ռուբլի, որից 51.426.353 ռուբլի—տէրութեան մասն էին կազմում, Ընդհանուր ծախսք եղել է 172.255.469 ռուբլ, որից 32.287.642 ռ. տէրութեան հաշիւն էին ընկնում, Ընդհանուր զուտ արդիանք է եղել 113.429.397 ռ., որ ասել է թէ միջն թւով մի վերստի հասնում է 4241 ռ. Իսկ մասնաւորապէս տէրութեան հասել է 19.185.609 ռուբլի կամ մի վերստին 2433 ռուբլի, իսկ ընկերութիւններին 94.243.688 ռ. կամ վերստին 4980 ռուբլի:

Քարածութիւնը որը 1867 թ. արտադրում էր իրր 4.360.000 տոննա, 1888 թ. հասել էր 5.170.000 տոննավի:

Արտածութիւնը 1890 թ. եղել է 703.935.000 ռուբլու,

Ներածութիւնը " " 416.065.000 "

Հացի արտահանութիւնը " 308.622.000 ռ.

Քամբակ է ներմուծել ամեն տեղից 11.556.000 փութ:

Նաւթի արտահանութիւնը հասաւ 1890 թվին 48.089.000 փութի, Աննալով 1885 թ.—10.829.000 փութ, 1888 թվին—34.921.000 փութ և 1889 թվին—44.800.000 փութ:

Փակտի արտահանութիւնը հասաւ 1890 թվին—53 միլ., մինչդեռ 1887 թվին միմիան 27½ միլ. էր արտահանմել, 1888 թվին 38½ միլ. և 1889 թվին 54½ միլիոն:

Ոսկու արտադրութիւնը 1890 թ. հասաւ մօտ 1945 փութի:

Անցնենք աէժմ պետական ելք ու մուտքի հայաց առ 1893 թ.:

## ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՄՈՒՏՔԻ ՆԱԽԱՀԱՇԻՒԻԾ

## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՊՈՒՏՆԵՐ

## I

## ԱՊՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՈՑԹՆԵՐ

1892 թ.

1893 թ.

Ուղղակի տուրքեր . . . . .	94.950.680 ռ.
Անուղղակի " "	474.621.323 ռ
Մաքսեր . . . . .	61.279.450 ռ
Պետական բեղալիաներ . . . . .	38.537.114 ռ
Արքունի գուքեր և գրամագլուխիներ . . . . .	135.494.897 ռ
Պետական կալւածների վաճառքը . . . . .	827.720 ռ
Ազատավճարներ . . . . .	77.000.000 ռ
Պետական գանձարանի ծախսեր փոխարինումն . . . . .	72.007.394 ռ
Զանազան հասուլթներ . . . . .	6.413.565 ռ
<b>886.544.325 Գումար սովորական հասուլթների . . . . .</b>	<b>961.222.143 ռ.</b>

## II

## ԱՐՏԱԿԱՐԳ ՄԻԶՈՑՆԵՐ

Պատերազմական վարձատրութիւն . . . . .	3.536.335 ռ.
Պահարւած գումարներ պետական բանկին էաւիտեանս . . . . .	1.200.000 ռ
Ցատուկ դրամագլուխներ, որոնք դարձնում են պետական գանձարանի ընդհանուր միջոցների . . . . .	5.937.574 ռ
Ապառելիք եկամուտ վարկալն գործողութիւնների գործողութիւններից . . . . .	68.562.333 ռ
<b>74.268.375 Գումար արտակարգ միջոցների . . . . .</b>	<b>79.936.242 ռ</b>
<b>965.303.066</b>	<b>Ընդհանուր գումար . . . . . 1.040.458.385 ռ.</b>

ԱՌ 1893 թ., ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 1892 ԹԻԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՑ

## ՊԵՏԱԿԱՆ ԺԱԽՔԵՐ

## I

## Ս Ո Վ Ո Ր Ա Կ Ա Ն Շ Ա Խ Ք Ե Ր

1892 թ.

1893 թ.

247.824.688 ռ.	Պետական պարտքի վճարի հաշւով . . . . .	264.325.647 ռ.
2.106.411 ռ	Պետական բարձրագույն հաս- տատութ. հաշւով . . . . .	2.115.165 ռ
11.405.154 ռ	Սինոդի հաշւով . . . . .	11.887.004 ռ
10.560.000 ռ	Կայսերական տան մինիստր.	10.560.000 ռ
4.812.412 ռ	Արտաքին գործ.	5.289.909 ռ
228.907.132 ռ	Զինուրական	232.937.030 ռ
47.882.232 ռ	Ծովագին	49.892.803 ռ
119.008.304 ռ	Ֆինանսների	122.572.579 ռ
24.539.715 ռ	Պետական կալւածների	25.458.305 ռ
80.972.998 ռ	Ներքին գործերի "	82.352.659 ռ
21.868.914 ռ	Ժողովրդ. լուսաւութեան	22.411.434 ռ
63.653.051 ռ	Ճանապարհն. հազորդակց.	70.800.814 ռ
24.574.192 ռ	Արդարադատութեան	25.310.830 ռ
4.284.162 ռ	Պետական կոնտրոլի	4.466.043 ռ
1.268.695 ռ	հայապահութեան	1.310.163 ռ
		931.690.385 ռ
Պահարի և պրավիանտի գների բարձրանալու դէպքի համար . . .	6.000.000 ռ	
Զնախատեած ծախսներ . . .	10.000.000 ռ	
893.668.066 ռ	Գումար սովորական ծախքերի . .	947.690.385 ռ

## II

## Ա Ր Տ Ա Կ Ա Ր Դ Շ Ա Խ Ք Ե Ր

Երկաթուղիների և նաւահան-	
գիստների համար . . . . .	62.161.000 ռ
Վերասպառազինման համար . .	29.607.000 ռ
Ցառուկ միջոցներ պաշարի . . . .	1.000.000 ռ
71.635.000 ռ.	Գումար արտակարգ ծախքերի 92.768.000 ռ
965.303.066 ռ	Ընդհանուր գումարը . . 1.040.458.385 ռ.

Առ զեկտեմբեր 20, 1892թ. պետական գանձարանի կարգադրութեան ներքու էին հետևեալ կանխիկ գումարները.

Ոսկով . . . . .	88.886.680	ռուբլի
Արծաթով (բանկալին) . . . . .	7.791.116	"
Թղթադրամով . . . . .	37.893.468	"
Տոկոսաբեր թղթեր, ոսկու արժեքով 7.219.277	"	"
" " թղթադր. "	9.260.783	"

Հէնց առաջին հայեացքից աչքի է ընկնում 1892 և 93 թ. նախահաշիւների գումարների՝ մօտ 74 միլ. ռ. զանազանութիւնը, որ առաջ է եկել ոչ լոկ եկամուտների աւելանալուց, ալ մասսամբ այն հանգամանքից, որ ներկալ 93 թ. նախահաշում ոսկու և արծաթի հաշով ստանալի արդիւնք ները հաշւած են՝ 1 ռ. 70 կ. թղթադրամ=1 ռ. ոսկի և 1 ռ. 19 կոպէկ թղթադրամ=1 ռ. բանկալին արծաթ,—մինչդեռ 1892 թ. նախահաշում դրանց տեղ ընդունած են եղել՝ 1.60 կ. թղթադրամ=1 ռ. ոսկի և 1.12 կոպէկ թղթադրամ=1. ռ. արծաթ.

Մինչդեռ ելքի գումարները թէ 92 թ. և թէ 93 թ. դրամած են իրար համապատասխան ձևով, աշնակէս որ բացատրութիւնների տեղիք չէ մնում, թէ որ մինխստութեան հաշով ներկալ 93 թ. նախահաշով աւմլի մնձ գումար է մախմալու համեմատաբար 92 թ. նախահաշուի հետ—նուն ադրամի համեմատութիւն անկարելի է անել մուտքի վերաբերեալ, քանի որ 93 թ. նախահաշու ալդ բաժինը ալլ սիստեմի է հնթարկւած քան 92 թւականինը. Մենք կօգտանք ֆինանսների մինխստը վիտոէ՛ի տած բացատրութիւններից ալդ բաժինը լուսաբանելու համար. Համեմատաբար 92 թ. նետ աւելի է հասութ սպասում 1893 թ.:

### Հողակին տուրքերից և անշարժ կալւած.

ներից . . . . .	339.067	ռ.
Քաղաքակին անշարժ գուքերից . . . . .	858.000	"
Առետրական վկաչաթղթերից և խոշորաց առած առ հարիւրական տուրքից	3.400.000	"
% առ թղթերի թղթերի վրա եղած տուրքից . . . . .	473.000	"
Խմիչկեղէնից շնորհիւ ամելացրած 2/4 կոպ. (մի գրադուարի համար) ակցիզի սպիրտի վրա նաև գարեջրի մի վերտուն 10 կոպէկ . . . . .	10.000.000	"
Խմիչկեղէնի հասովթն. սովորական ամելացումից	4.822.740	"
Քամբաքուից, շնորհիւ նոր ամելացումից հին ակցիզի վրա 2 ռ. փութին և 50%, թամբաքու առետրուր անողների վրա . . . . .	2.300.000	"
Շաքարի հասովթներից սովորական ամելացում է սպասում . . . . .	2.081.000	"

Նաեւ չնորհիւ նոր աւելացած ակցիզի . . . . .	5.400.000	ն
Ն ա ւ թի ց, չնորհիւ աւելացրած ակցիզի . . . . .	5.000.000	ն
Եւ հասոլթների սովորական աւելացումից. . . . .	1.014.000	ն
Լու ց կի ի ց, չնորհիւ աւելացրած ակցիզի . . . . .	2.798.000	ն
Մաքսերի ց . . . . .	24.070.000	ն
Փոստի ց . . . . .	940.050	ն
Հեռագրի ց և հեռախօսի ց . . . . .	1.100.000	ն
Անտառաէին արդիւնքից համեմատաբար 92 թ.	1.585.000	ն
Արքունական երկաթուղիներից՝ չնորհիւ պետու-		
թեան ձեռքբ անցած նոր երկաթուղիների . . .	5.770.000	ն
Երկաթուղարին ընկերութիւնների վճարումներից	4.177.964	ն
Եւ մի քանի ազլ հաշիւներով՝ մօտ. . . . .	7.000.000	ն
Եթէ ալս բոլոր սպասող ամելացումներից ի մի գումարենք ան-		
գումարները, որոնք արդիմք են ֆինանսների նոր մինիստրի նոր կար-		
գումարներին և բանած դիրքին, ան է աւելացնել անուղղակի տուր-		
քերը կը ստանանք		
Խմիչկեղէնի նոր ակցիզը . . . . .	10.000.000	ա.
Թամբաքւի . . . . .	2.300.000	ն
Եաքարի . . . . .	5.400.000	ն
Նաւթի . . . . .	5.000.000	ն
Լուցկի . . . . .	2.500.000	ն
Գումար . . . . .		25.200.000 ա.

Առանց մանրամասնութիւնների մէջ մանելու թէ մինչ որ աստիճան կիրականալ ներկաւ տարւակ նախահաշիւը իւր ամբողջութեան մէջ,— մննք կը շատանանք մէջ բերելու ալ, մինիստրի հետեւալ խօսքերը վերա- բերմամբ ալդ 25 միլ. նոր ակցիզի:

ԱԱքի առաջ ունենալով ալդ տուրքերի վճարողների մեծ շրջանը— զմար ենթադրելի է ան վախը թէ ալդ տուրքերը զզալի բեռ կը կազ- մն ազգաբնակութեան վճարելու ընդունակութեան (платежная способность),

\*  
\* \*

Մանք արգէն առիթ ենք ունեցել խօսելու թէ վարկի նոր առա- ջարկող եղանակների մասին և թէ եղածների մասին,

Փոխառութիւն առ զական ընկերութիւնները, գերամանական Շուլցէ-Դմիլիչէի ընկերութիւնների ձեռով, գոլութիւն ունին իուստատա- նում մօտ 25 տարի. Եւ մինչենք ուսւա մամուլի մէջ աշխատում են նազեցնել ալդ տեսակ ընկերութիւնների անկատարելիութիւնը և նոյն խակ անօպտակարութիւնը, թւերի վրա հիմնած իրազութիւնը հակառակն

է ապացուցանում, 17-րդ տեղեկագիրը գիւղական Փոխատութիւնալողական ընկերութիւնների մասնաժողովի—պարունակում է այն թմբը, որոնց մասին խօսելուց առաջ երկու տողով բացատրենք այդ ընկերութիւնների պալմանները, քանի որ դոցա նպատակը պարզ է:

1) Ընկերութիւնը կարող է փող ընդունել և փոխ տալ,

2) Երկուակի գումարը մը ընկերութեան համար չը պէտք է աւել լինի քան ընկերակցական ու պահեստ գումարներից հինգ անգամ աւելի;

3) Ընկերութեան անդամակցում են առանց դասակարգերի խարութեան և փոխադարձ պատասխանառութեամբ բոլոր անդամների.

4) Ամեն մի անդամ փոխ կարող է վերցնել ընկերութիւնից  $1\frac{1}{2}$  անգամ աւելի քան է իւր անդամավճարը, եթէ առանց երաշխաւորի է վերցնում, իսկ մէկի երաշխաւորութեան դէպքում—տւած անդամավճարից երեք անգամ աւելի է կարող փոխ սաւանալ:

5) Փոխ է տրում անհատի, առանց գրափ և ոչ աւելի քան մի տարով:

6) Միջին թուղ անդամակցական վճարը չէ աւելի քան 50 ռուբլի:

Այս հիմունքների վրա Ռուսաստանում վաթսուն թականների վերջերքից առ 1 լունւար 1890 վաւրացրւած են եղել 1463 ընկերութիւնների կանոնադրութիւններ՝ իրարից չնշին փոփոխութիւններով. Ազդ թւից շարունակում էին գործել առ 1890 թւականը 836 ընկերութիւններ, իսկ 124-ը փակել էին շատ ու քիչ գործելուց լիսուլ:

Այս վերջին թիւը հետաքրքրական է քանի որ տեղեկութիւններ կան դոցանից 276 մասին, որոնցից 124-ը փակել են անդամների գործը տանելու տղիտութիւնից, 53-ը պատահական սկանառուներից, 43-ը անկարող լինելով վճարել ընկերութեան սկզբնական փոխառութիւնը և միմիան 56-ը անդամների չը վերադառնելուց իրանց վերցրած փոխառութիւնների:

Առ 1 լուն. 1890 թիւը գորութիւն ունեցող 836 ընկերութիւններից մասնաժողովին ուղարկել էին իրանց հաշիններ 730 ընկերութիւններ և ահա թէ ինչպէս է ձևակերպւում դոցա գործունէութիւնը 1867 թ. սկսած, 730 ընկերութիւններ՝ մասնակցութեամբ 202.749 անդամների, անդամավճար դրամագլուխ' (ՊԱՅԵՎՈՅ) 6.232.466 ռ., պահեստի դրամագլուխ' 1.279.447 ռ., զանազան դրամագլուխներ՝ 197.656 ռ., պահ տւած գումարներ (ԱԿԼԱԴՅ) 5.081.910 ռ., փոխառութիւններ 5.036.810 ռ., և փոխառութիւններ փոխառութիւնների հաշվին 16.288.523 ռ. Ամբողջ ժամանակամիջոցում ընկերութիւնների ստացած շահն է  $10\frac{1}{2}$  միլ. ռ., իսկ արած 53 միլ. ռ. փոխառութիւններից ընկերութիւնները ետ են վճարել 49 միլիոն ռ.. Այս ընկերութիւնները վակելում էին վարկ պետական բանկից և պարտ էին սրան փոխառարար վերցրած 20 միլ. ռ. առ 1 լուն. 1887 թ. և միմիան 25 ընկերութիւններ էին որ անձիշտ են եղել դէպի իրանց պարտքերի վճարը ընդամննը 88 հազար ռուբլիով, որից բանկը գուցէ կորցնի:

միմիակն զրա կէսը, մինչդեռ ընկերութիւններից իւր ստացած շահը հաս-  
նում է 665.000 ռ.

Աչքմ անհերքելի կը զառնալ նաև այս տեսակ ընկերութիւնների  
մատուցած մեծ ժառախութիւնը և օգուտը եթէ տաելու լինինք, որ անդամ-  
ները փոխ էին առել Յ ամսից սկսած մինչև 1 տարի ժամանակամիջոցով՝  
217 միլ. ռուբլուց աւելի և տոկոս վճարել մօտ 17%, միլ. ռ. և եթէ  
այս վերջին գումարից հանելու լինինք մօտ 5% միլ. ռ. որ ետ տրմցաւ  
անդամներին իրեն օգուտ, ասել է թէ որանք վճարել են վերցրած փո-  
խառութիւնների համար լոկ 11% միլ. ռուբլի, կամ 7,6%.

Որտեղից էին կարող գիւղացիք փող ձեռք բերել  
աչդպիսին է ժամանական տուառութեան ունեցող անրէա-  
կան գաղթականական ընկերութիւնը անցեալ տարւանից իրաւունք ստա-  
ցաւ գործելու նաև Ռուսաստանում:

\* \* \*

1891 թ. սեպտեմբեր ամսից Լոնդոնում գոլութիւն ունեցող անրէա-  
կան գաղթականական ընկերութիւնը անցեալ տարւանից իրաւունք ստա-  
ցաւ գործելու նաև Ռուսաստանում:

Ընկերութեան հիմնադիրն է հանրածանօթ բառուն Հիոնը, որ մեն-  
մնակ է լրացրել ընկերութեան զրամաղլուխը այն է 50 միլիոն ֆրանկ, իւր  
իսկ սեփական միջոցներից:

Ծրագրուած է 25 տարում Ռուսիակից գաղթացնել Արգենտինա, Բրա-  
զիլիա, Կանադա, Մեկսիկա. և Միացեալ նահանգները 3.250.000 ռուսա-  
հպատակ հրէաները Գաղթականական փորձը պիտի սկսէր 92 թւականից  
24.000 հրէաներ գաղթացնելով, իսկ աշնուհետե տարեց տարի ակդ թիւը  
պիտի աւելացնելու:

Ընկերութեան նախագահն է ինքը բառուն Հիոնը, որի հաւատարմատար  
անդլիանապատակ Ռւալուը նկել էր Պետերբուրգ վիչեալ բանակցութիւն-  
ները սկսելու ռուս կառավարութեան հետ. Ազդ ընկերութիւնը, ինչպէս  
վկրը վշեցինք, արդէն ճանաչւած է Ռուսաստանի կողմից և արդէն բա-  
ցած ռունի Պետերբուրգում կենդրունական գաղթական կոմիտետ նաև  
իրաւունք ըստ հարկին միւս քաղաքներում ևս տեղական կոմիտեաներ  
հաստատելու:

Ժամանակաւոր ։ կեղծ գաղթականութեան առաջքն առնելու  
համար (զինւորական ժառակութիւնից աղատւելու համար և ապա էլի ռուսա-  
հպատակ վերադառնալ) ռուսաց կառավարութիւնը ի թիւս ակը նախա-  
դգուշութիւնների պահանջել և ստացել է 100.000 ռուբլու մի կանխա-  
վճար, որ և գտնւում է իրը զրաւական պետական բանկում:

\* \* \*

Որուս Առքօնական ամսագիրը նորերս մի չօղւած է տպել, որով փարաւում են այն կասկածները թէ իր ռուս բարձր հոգեսորականութիւնը ընդդէմ է զժրաղդ ամուսնութիւնների լուծելու խնդրին։ Ամսագրի ասելով — «Եթէ որ ամուսնական կապերի ներքին բովանդակութիւնը կորել անլայտացել է — ամուսնութիւնը նման օրինակ պայմաններում իւր ովքի մէջ թողնել — պահպանելը — կը նշանակէր զիտակցօրէն թով տալ ամուսնական խորհուրդը ոտնակոխ անելու ախալիսիններին, որոնք կամ չեն ըմբռնում ազդ խորհուրդը, կամ ակնալաւտնի անընդունակ են նրան (ՑԼՈՅՍՏԻ) պահպանել բոլոր մաքրութեամբ և լոլոր անմատչելութեամբ... Երկու չարիքից պէտք է ընտրել փոքրագոնը. Հարկաւ, ամուսնալուծութիւնը չէ ցանկալի, սիսուր և ակնալաւտնի մի չարիք է, — բայց արդեօք կրկնակի չարիք չէ անքակտելի թողնելը ախալիսի ամուսնութիւնների, որոնց համար ազդ կապերը չեն պահպանել ոչինչ սրբութիւն և որոնց համար ամուսնական կապերի սրբութիւնը և մաքրութիւնը — լոկ մի դատարկ հնչին է»։

Որուս մամուլի մի մասը առաջ բերելով ակս կարծիքները այն միտքն է լալանում որ իրապէս, ուուս օրէնքները թուլատրում են ամուսնալուծութիւնը միան մի գէպքում՝ ամուսիններից մէկի անհաւտարմութեան ապացուցւած դէպքում (հաշվի չ'առնելով ամուսիններից մէկի աքսորմելու գէպքը և անլայտ գտնալունը) — մինչդեռ 1827 թ. Պետերբուրգում, Սինողի ձեռքով հրատարակւած «Յանկ օրինաց արևելեան լունական եկեղեցւու» գրքի մէջ կան նաև հետեւեալ կէտերը վերաբերեալ ամուսնալուծութեան։

- 1) Ամուսնալուծութիւններ կատարել չնացողութեան դէպքերում Ամեստարանի հիման վրա։
- 2) Եպիսկոպոս ձեռնադրւած ռուս պրեսէփանքներին բաժանել սոցա փոխադարձ համաձայնութեամբ։
- 3) Ամուսիններից մէկի կամ միւսի ապացուցւած չար մտադրութեան դէպքում գէպի իւր կողակցի կեանքը։
- 4) Եթէ մարդը անբուժելի է հիւանդ։
- 5) Բաժանել կնոջը, որը լողացւում է բաղնիսում ուրիշ ամուսնացած մարդու հետ, կամ որը զիշերում է ուրիշ տանը առանց իւր մարդի թուլուութեան և որի չնանալը ապացուցւած է։
- 6) Կնոջը — որը զրապարաւած կը լինի դատաստանի առաջ իւր մարդու ձեռքով և որի (կնոջը) չնանալը չէ ապացուցւած՝ բաժանել եթէ ինքը (կինը) կը ցանկանալ և կը պահանջի։
- 7) Մարդուն, որը իւր կնօջ համար միջնորդութիւն է անում (սահմանադրության շենքու)։

8) Մարդուն, որը իւր կնօջը չի ճանաչել երեք տարուց լետով (ոչ պահանջագո) և ալլն.

\* \* \*

1878 թւականին էր որ առաջին անգամ պ. Տոպորնինի ստորագրութեամբ մի լոգւած երեաց «Ալովօ» (Խոսք) ռուա ամսագրում, որը և առաջին անգամ հրատարակով ուշադրութիւն դարձրեց ռամիկ ամբոխի զարգացման կարևոր հարցի վրա:

1884 թւականին լուս տեսաւ Խարկովի վարժուհիների հրատարակած ժողովածուն. «Ինչ կարդաք ժողովուրդը», մի հրատարակութիւն, որը, ըստ Գլեք Ռւսապենսկու, «երկնակին մի մանանակ էր հոգի ցամքեցնող մեր կենական դաստարկութեան մէջ»:

Նոյն 1884 թ. հիմնւել է «Ծնկերութիւն օգտակար գրքերի տարածման համարու Ապա հիմնւեցաւ Մարակուեզի «ժողովրդական դրադարնը», ապա 1885 գործի է կանգնում «Միջնորդ» հրատարակչական ձեռնարկութիւնը. Այսաւ միակ նպատակն էր մրցել էժանագին բալց միննոյն ժամանակակիցակար, ուուրոչնը կոչւած դրոշանոց հազարաւոր հրատարակութիւնների հետ—հրատարակութիւնների որոնք գրգռում են ռամիկի կրքերը, վատ բնազրումները, հաստատում նրա սնուտիապաշտութիւնը և նախապաշտարութեները:

Բալց միմիան բարի ցանկութիւնը քիչ էր ժողովրդի կրթութեան ծառակելու համար և հարկ եղան մի քանի տարւակ վորձեր իմանալու համար թէ խսկաղէս ինչ ուղղութեամբ պիտի կազմէէին ինտելլիդենտների ձեռքով պատրաստած ռամիկի համար ալդ գրքերը:

1885 թւականից սկսած ռասց մամուլը իւր լուրջ ուշադրութիւնը դարձրեց ալդ հարցի վրա որին և նվիրեցին զանազան լոգւածներ՝ Ռусскія Вѣдомости, Ռусскій Начальныи Учитель (1885 թ.), Ռусская Мысль (1887 թ.), Ռусское Богоугодство (1889) և վերջապէս Հանդիպութեան (1892 № 7), որը գալիս է մօտաւորապէս հետեւել եղրակացութեան. ռամիկան հրատարակութիւնը պիտի ի ինք է ժանագին, պատկառելի ծաւալով, խոչոր տառերով և պատկերազրդ, մաքուր դրական լեզով գրած՝ բալց պարզ և ռամիկին հասկանալի մի լեզով, նախադասութիւնները կարծ, դարձւածները՝ հեշտ ըմբռնելի, Մեկնութիւնները պարզ զուրկ վերացականութիւնից և լիրիական աւելուրդարաւնութիւններից պիտի ոչ ռատր ժողովրդական խաւերի համար և կենդանի անձինքներով.

Ժողովրդական—զիտական զրգելը աւելի ևս մնձ խնամքի են կարօտ ոճի պարզութեան և կարճութեան կողմից:

Առհասարակ ժողովրդական զիրքը պէտք է սիրու, ճշմարտասիրութեան և խաղաղասիրութեան մաքեր տարածել կարողանալ ժողովրդի ստոր խաւերի մէջ և օրինակներ տալ հասարակական կեանքի լուսաւոր և պաղաքեր ծառակութեան:

Պիտի կարողանալ լաւացնել ժողովրդական բարուականութիւնը և արթնացնել սամիկի թմրած ուղեղը:

Աւելացնենք որ ուսա ամսադրերից մը քանիսը պարբերաբար ուշադրութիւն են զարձնում և դրախոսում ժողովրդական ալս նոր օրինակի հրատարակութիւնները:

\* \* \*

### Ոուս լեզով լուս տեսած նոր գրքերից արձանագրենք:

1) Итоги Экономического исследования России по даннымъ земской статистики, Т. I. Крестьянская община, В. В. Москва, стр. 600, գիւը 3.50 կ. Այս հասաքրքիր զիրքը, որի հեղինակը է պ. Վ. Վ.—ուս հասարակութեանը իւր տնաևսագիտական բազմաթիւ աշխատութիւններով քաջ ծանօթ մի անձնաւորութիւն, հիմնել է իւր ալս հետազոտութիւնը ճշգրիտ թւերի վյա, որ մատակարարել են նրան Որուաստանի գիւղական վարչութիւնների վիճակագրական թւերը. Այս առաջին մասը, բազկացած 600 երեսին—նւերւած է ուսւ համակնքի ուսումնասիրութեանը զիլաւորապէս՝ հողատիրական տեսակէսարից, հողի արդիւնաբերութեան, արենդի, տուրքերի վճարելու ընդունակութեան ահօնակէտներից և ալին:

2) Գեօթէի գրւած քնները ուսւս գրողների թարգմանութեամբ, Յ հասոր, խմբագրութիւն Վահնընքի, հրատարակութեամբ Ն. Գերբելի, որը լաւանի է իւր նմանորինակ հրատարակութիւններով Շեքսպիրի (4 հրատարակութիւն), Շիլլերի (6 հրատ.), Բալոընի (3 հրատ.), Ներկաւ հրատարակութիւնը երկրորդ տպագրութեամբ է և բարեփոխած:

3) Մ. Պ. Պոգոգինի կեանքը և աշխատութիւնները. Յ. Բարսովովի աշխատասիրած ալս վեցերորդ հասորը, որը բաղկացած է 400 երեսից,—վերաբերում է ուսւ նշանաւոր գրողի և զործիչի կեանքի միմիան երկու տարիներին, ալն է 1840—1842.

4) Նւրոպակէի պատմական աշխարհագրութիւնը, Քարգմանութիւն կ. Ֆրիմանից, 2 հասոր:

5) Ուսւսասաւանի վիճակագրութիւնը՝ հացի բերքը 1891 թ. 60 նահանգներում.

6) Բնագանական թերապիա—հանդուցեալ պրոֆ. Ավալաղի, հրատարակութիւն 5.րդ, բարեփոխած,